28
ԱՊՐԻԼԻ
2021

Luys Լույս®

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Թորոսյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ապրիլի 24-ի ավանդական ուղերձում, անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրականացված վայրագություններին, օգտագործեց «ցեղասպանություն» եզրույթը. «Ամեն տարի այս օրը մենք ոգեկոչում ենք բոլոր նրանց, ովքեր զոհվել են Օսմանյան դարաշրջանում Հայոց ցեղասպանության ժամանակ, և մենք կրկին պարտավորվում ենք կանխել նման վայրագությունների կրկնությունը»:

Այս ուղերձը ամբողջականացրեց Միացյալ Նահանգների վարչակազմի տեսակետը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, քանի որ 2019թ. ԱՄՆ կոնգրեսի երկու պալատները բանաձևեր էին ընդունել՝ արձանագրելով հայերի ցեղասպանության փաստը:

Անմիջապես հետևեց Թուրքիայի արձագանքը: Արտաքին գործերի նախարար Չավուշօղլուն Թվիթերի իր էջում գրեց. «Բառերը չեն կարող փոխել կամ նորից գրել պատմությունը: Մեր անցյալի վերաբերյալ ոչ մեկից դաս չենք առնելու»: Հատկանշական է, որ Չավուշօղլուն նախագահ Բայդենի ուղերձում տեսնում է ոչ միայն անցյալի, այլև ներկայի ու ապագայի վերաբերյալ դիրքորոշում: Հավանաբար պատահական չէ, որ, ինչպես փոխանցում է «Անադոլու» գործակալությունը, Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանն էլ անմիջապես հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հետ՝ քննարկելով «երկու երկրների համատեղ քայլերը՝ վերջին գործընթացների ֆոնին»: Հեշտ է նկատել, որ ինչպես Չավուշօղլուին, այնպես էլ երկու նախագահներին մտահոգել է ոչ միայն «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումը, այլև նախագահ Բայդենի ուղերձի հետևյալ հատվածը. «Այսօր, երբ մենք սգում ենք կորստի համար, մեր հայացքը հառենք նաև ապագային՝ աշխարհին, որը մենք ցանկանում ենք կառուցել մեր երեխաների համար: Աշխարհ, որտեղ տեղ չկա խավարամտության և

անհանդուրժողականության համար, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, իսկ մարդիկ կարող են ապրել արժանապատիվ և անվտանգ: Եկեք կրկին հաստատենք մեր ընդհանուր վճռականությունը՝ կանխելու համար ապագա վայրագություններն աշխարհի ցանկացած կետում: Եվ եկեք ձգտենք դարմանելուն ու հաշտեցմանը՝ աշխարհի բոլոր մարդկանց համար»:

Ցեղասպանության ակնհայտ հայտանիշներ ունեցող նման աղետներից վերջինը սկսվեց անցյալ տարվա սեպտեմբերի 27-ին և շարունակվեց 44 օր Լեռնային Ղարաբաղում: Ինչպես նշվում է Եվրախորհրդարանի 2020 (2020/2206(INI) «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության մասին» (CFSP) զեկույց-բանաձևում, ինչպես նաև «Տարբեր երկրներում մարդու իրավունքների պաշտպանության մասին» ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցում, Թուրքիայի աջակցությամբ ու մասնակցությամբ Ադրբեջանն իրականացրել է ռազմական ագրեսիա Լեռնային Ղարաբաղի նկատմամբ՝ օգտագործելով Լիբիայից և Սիրիայից բերված վարձկան ահաբեկչական խմբավորումների, արգելված զինատեսակներ, ճշգրիտ նշանառությամբ հրթիռակոծել քաղաքացիական շինություններ, հիվանդանոցներ, ծիսական կառույցներ և այլն: Արդյունքում առկա են 5 000 զոհեր, ավելի քան 10 000 վիրավորներ, հարյուրավոր գերիներ, որոնց Բաքուն ազատ չի արձակում անգամ ռազմական գործողությունների դադարեցումից 6 ամիս անց, տասնյակ հազարավոր փախստականներ, հսկայական ավերածություններ Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր քաղաքներում ու գյուղերում:

Ակնհայտ է, որ եթե Ռուսաստանի ջանքերով հրադադար չհաստատվեր և տարածաշրջան չմտնեին խաղաղապահ ուժեր, ապա այսօր ամբողջությամբ բնաջնջված և տեղահանված կլիներ Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչությունը: Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցավ ցեղասպանության մի նոր փորձ: Սակայն վտանգն այսօր էլ միանգամայն իրական է: Զոհը նույնն է՝ հայ մարդիկ, ովքեր ցանկանում են իրացնել միջազգային իրավունքով սահմանված իրենց հայրենիքում խաղաղությամբ ապրելու և իրենց քաղաքական կարգավիճակն ինքնուրույն որոշելու իրավունքը: Նույնն է նաև աղետաբերը՝ Թուրքիան՝ այս անգամ Ադրբեջանի հետ (106 տարի առաջ Ադրբեջանը ցեղասպանությանը չէր կարող մասնակցել՝ այդպիսի պետություն գոյություն չուներ):

Նախագահ Բայդենի ուղերձը շատ կարևոր է, քանի որ անգամ հարյուր տարի անց մարդիկ պետք է տեսնեն, որ 21-րդ դարում ժամանակակից ամենաազդեցիկ պետության և միջազգային հանրության համար անընդունելի են նման վայրագությունները: Պատահական չէ, որ աշխարհի տարբեր ծայրերից իրենց երախտագիտության խոսքն են ասում բազմաթիվ հայեր և այլ ազգերի

ներկայացուցիչներ: Սակայն պակաս կարևոր չէ, որ Բայդենը կարևորում է այլևս երբեք նման վայրագություններ թույլ չտալու վճռականությունը: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը կարող է լինել այն փորձաքարը, որը ցույց կտա՝ կա՞ արդյոք նման իրական վճռականություն, թե՞ այն կմնա որպես գեղեցիկ գաղափար, որը կխամրի աշխարհաքաղաքական շահերի ազդեցության ներքո:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ, ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ծագել է, երբ անցյալ դարասկզբին Ռուսական կայսրության փլուզումից հետո 95 տոկոսով հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը Ռուսաստանի կոմունիստների ապօրինի որոշմամբ բռնի ուժով մտցվեց նորաստեղծ Ադրբեջանի խորհրդային հանրապետության կազմի մեջ՝ որպես ինքնավար մարզ: Խորհրդային տարիներին ճնշումների ու բռնությունների ենթարկված մարզի հայ բնակչության մասնաբաժինն ամբողջ բնակչության կազմում 95 տոկոսից նվազել էր 75 տոկոսի, և երբ հռչակվեց գորբաչովյան «պերեստրոյկայի» քաղաքականությունը, մարզի խորհուրդը հայտարարեց ինքնորոշման իրավունքի իրացման մտադրության մասին: Ի պատասխան՝ պաշտոնական Բաքուն կազմակերպեց և իրականացրեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի հայերի ջարդերը, որոնք դադարեցվեցին խորհրդային զինված ուժերի միջամտության շնորհիվ: 1991թ. վերջին մարզում անցկացվեց հանրաքվե, որին մասնակցեց բնակչության 89 տոկոսը, որի 97 տոկոսը քվեարկեց մարզի անկախության օգտին: 1992թ. Ադրբեջանը սանձազերծեց լայնածավալ ագրեսիա Լեռնային Ղարաբաղի դեմ՝ թույլ չտալու համար մարզի ինքնորոշումը: Պատերազմը տևեց մինչև 1994թ. մայիսը, երբ կնքվեց հրադադարի եռակողմ պայմանագիր Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և ադրբեջանական ռազմական ագրեսիան հետ մղելու նպատակով Լեռնային Ղարաբաղին միջազգային իրավունքի հիման վրա աջակցող Հայաստանի միջև:

Անցյալ դարի 90-ականներին խնդրի կարգավորման միջնորդական առաքելությունը ստանձնել է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահությունը՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամ երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: 2007 թվականից մինչև 2020

թվականը բանակցությունները ընթացել են «Մադրիդյան սկզբունքներ» անունը ստացած փաստաթղթի շրջանակներում, որը առաջարկում էր հակամարտությունը լուծել Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքների հիման վրա՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում, ժողովուրդների հավասարության ու ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն: Բանակցություններն ընթանում էին 6 հիմնական տարրերի վերաբերյալ լուծումների քննարկման շրջանակում: Դրանցից մեկը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին, մյուսը՝ այն տարածքները Ադրբեջանի ենթակայությանը վերադարձնելուն, որոնք 1994թ. հրադադարի հաստատումից հետո գտնվում էին հայկական զինված ուժերի վերահսկողության ներքո՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման նկատառումով:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվում էր, ըստ Մինսկի խմբի ռուս համանախագահ Ի. Պոպովի, հետևյալ լուծումը. «Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»:

Քանի որ միջազգային իրավունքը սահմանում է, որ ինքնորոշվող ժողովուրդն ինքն է որոշում իր քաղաքական կարգավիճակը՝ ընտրելով չորս հնարավոր տարբերակներից որևէ մեկը, այդ թվում՝ անկախությունը, ապա պարզ է որ Մինսկի խմբի համանախագահների առաջարկով նախատեսված տարբերակով Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ընտրելու էր անկախությունը: 2016թ. Ի. Ալիևը դժգոհում էր, որ Ադրբեջանին ստիպում են ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Ահա թե ինչու վերջին 4 տարիների ընթացքում Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ 2 փորձ է արել ռազմական ագրեսիայի միջոցով ոչնչացնելու կամ տեղահանելու Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը՝ խնդիրը լուծելու համար: Դրանցից առաջինը տեղի է ունեցել 2016թ. ապրիլին, երկրորդը, որը լայնամասշտաբ բնույթ ուներ, 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը: Վերջինը հաջողվեց կանգնեցնել միայն Ռուսաստանի միջնորդությամբ նոյեմբերի 9-ին արված եռակողմ հայտարարությամբ, որի համաձայն տարածաշրջան մտցվեցին ռուս խաղաղապահներ: Ադրբեջանի վերահսկողության ներքո են անցել Լեռնային

Ղարաբաղի հարակից բոլոր տարածքները, որոնք այդ ագրեսիայից առաջ գտնվում էին հայկական զինված ուժերի վերահսկողության ներքո: Ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ են հայտնվել նաև Լեռնային Ղարաբաղի երկու քաղաքներ՝ Շուշին և Հադրութը, հինգ շրջանների զգալի տարածքներ, որոնց հայ բնակչությունը տեղահանված է, իսկ 1992-1994թթ. պատերազմից հետո՝ 95 տոկոսով հայաբնակ Շահումյանի շրջանը: 2020թ. միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից և բանակցային գործընթացի սկզբունքներից մեկի՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքի կոպիտ ոտնահարմամբ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի ամփոփ գնահատականը տվել է Եվրախորհրդարանը՝ վերոհիշյալ CFSP զեկույց-բանաձևում. «Եվրախորհրդարանը ափսոսում է, որ ստատուս քվոյի փոփոխություններն իրականացվել են ռազմական ուժի կիրառմամբ, այլ ոչ թե խաղաղ բանակցությունների, վճռականորեն դատապարտում է քաղաքացիական անձանց սպանություններն ու քաղաքացիական օբյեկտների և ծիսական վայրերի ոչնչացումը, դատապարտում է հակամարտության ընթացքում կասետային սպառազինության կիրառումը:

Եվրախորհրդարանը համարում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հուսալի կարգավորումը դեռ պետք է գտնել, և որ խաղաղության հասնելու և տարածաշրջանի վերջնական իրավական կարգավիճակի որոշման գործընթացը պետք է գլխավորեն Մինսկի խմբի համանախագահները և հիմնվի Հիմնական սկզբունքների վրա, ընդգծում է այն բանի ապահովման խիստ անհրաժեշտությունը, որ Լեռնային Ղարաբաղում պետք է ապահովվի հայ բնակչության և հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը, որպեսզի ներքին տեղահանված անձանց և փախստականներին թույլ տրվի վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը, կոչ է անում պատշաճ ձևով քննել ռազմական հանցագործությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել, կոչ է անում ԵՄ-ին ավելի ակտիվ մասնակցել հակամարտության կարգավորմանը և տարածաշրջանի ճակատագիրը չթողնել այլ պետությունների ձեռքում: Եվրախորհրդարանը վճռականորեն դատապարտում է Թուրքիայի ապակայունացնող դերը, որն ավելի է թուլացնում Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանի փխրուն կայունությունը, կոչ է անում Թուրքիային զերծ մնալ որևէ միջամտությունից Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, այդ թվում՝ Ադրբեջանին ռազմական աջակցության առաջարկությունը, զերծ մնալ իր ապակայունացնող գործողություններից և ակտիվորեն աջակցել խաղաղությանը, բացի այդ դատապարտում է Թուրքիայի

կողմից Սիրիայից և այլ երկրներից օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխումը Լեռնային Ղարաբաղ, ինչը հաստատում են միջազգային սուբյեկտները, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետությունները, ափսոսում է նրա պատրաստակամության համար ԵԱՀԿ Մինսկի խումբն ապակայունացնելու ուղղությամբ՝ հավակնություններ ունենալով հակամարտությունում ավելի վճռական դերակատարության»:

Մի՞թե այս ամենն այլ բան է, քան առնվազն ցեղասպանության փորձ: Ընդ որում, դրա իրագործման վտանգը դեռևս մնում է, քանի որ տարածաշրջանում խաղաղապահների գտնվելու ժամկետը նոյեմբերի 9-ի վերոհիշյալ հայտարարությամբ սահմանված է 5 տարի, եթե կողմերից որևէ մեկը ցանկություն հայտնի նրանց հեռացնել այդ ժամկետի ավարտից հետո:

Իհարկե, հակամարտությունների կարգավորման վրա մեծ է աշխարհաքաղաքական գործոնի դերը: Քանի որ Հարավային Կովկասը դարձել է աշխարհաքաղաքական ամենասուր մրցակցության թատերաբեմերից մեկը, դա է պատճառը, որ Լեռնային Ղարաբաղը հայտնվել է ցեղասպանության սպառնալիքի ներքո: Սակայն, ինչպես ցույց են տվել Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի, Կոսովոյի դեպքերը, երբ վերսկսվում են ռազմական գործողությունները և ցեղասպանության, էթնիկ զտումների, զանգվածային սպանությունների և ավերածությունների սպառնալիք է առաջանում, խնդիրը կարող է լուծվել ինքնորոշման իրավունքի պարտադրված անհապաղ (remedial secession) կիրառման միջոցով: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները միաժամանակ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են: Նրանք պարտավոր են 2005թ. ՄԱԿ անդամ երկրների ընդունած «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի համաձայն «պաշտպանել բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից»: Այդ պատասխանատվությունը ենթադրում է կանխարգելման պատասխանատվություն, դրա անբավարար լինելու դեպքում՝ արձագանքման պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև ռազմական միջամտություն, ինչպես նաև վերականգնման պատասխանատվություն:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Թեև Թյուրքական խորհրդի գագաթնաժողովում Ի. Ալիևը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն այլևս կարգավորված է, նման վարչական միավոր այլևս չկա, այնուամենայնիվ, միջազգային հանրության կարծիքն այլ է: Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, մի շարք այլ երկրներ, Եվրոպական միությունն ու այլ միջազգային կազմակերպություններ, միաձայն ողջունելով Ռուսաստանի ջանքերը ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ, հայտարարեցին, որ հակամարտությունը դեռևս կարգավորված չէ, մի շարք հարցեր, այդ թվում՝ նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, դեռևս պետք է վճռվեն, և դա պետք է արվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով:

Արագ արձագանքեցին նաև փորձագետները: ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին ամերիկյան համանախագահ Քերի Քավանո. «Ալիևը գործում է այնպես, կարծես հակամարտությունը լուծված է: Դա այդպես չէ, քանի որ առանցքային խնդիրները մնում են չլուծված: Անհրաժեշտ է համապարփակ կարգավորում՝ կայուն խաղաղության և բարգավաճման հիմք ստեղծելու համար»: Ջ. Լոշը (J. Losh) նոյեմբերի 25-ին գրում էր՝ «այդ գործարքը կնքելով՝ Մոսկվան ստանձնեց դրա պատասխանատվությունը, թեև ըստ դրա պայմանների՝ կարող է ներգրավել այլ կողմեր ևս՝ ԵԱՀԿ-ից մինչև ՄԱԿ, արևմտյան մայրաքաղաքներ և այլ միջազգային կազմակերպություններ» և ավելացնում, որ ըստ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Քեննի Գլյուկի (Kenny Gluck), որը ավագ բանակցողներից մեկն է եղել Դարֆուրում, Եմենում և Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում, «կա քաղաքական բնույթի ավելի երկարաժամկետ խնդիր: Այժմ ամենակարևորն այնպիսի մեխանիզմների գործարկումն է, որոնք դուրս են գալիս կրակի դադարեցման շրջանակներից և նպատակաուղղված են երկարաժամկետ քաղաքական լեգիտիմությանը»: Որոշ փորձագետներ էլ կոչ են անում Միացյալ Նահանգներին ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, իսկ Ֆրանսիայի Սենատն ու Ազգային ժողովը որոշումներ ընդունեցին՝ դիմելով նախագահ Մակրոնին՝ անկախությունը ճանաչելու առաջարկով:

Դեկտեմբերի 3-ին Տիրանայում Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարները՝ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Բիգունը և Ֆրանսիայի արտաքին գործերի և Եվրոպայի նախարար Ժ.-Ի. լը Դրիանը համատեղ հայտարարությամբ հստակ ձևակերպեցին իրենց դիրքորոշումը. «Համանախագահ երկրները կոչ են

անում Հայաստանին և Ադրբեջանին օգտագործել կրակի ներկայիս դադարեցումը համանախագահների հովանու ներքո ամուր և կայուն խաղաղ համաձայնության բանակցությունների համար: Նրանք կրկին հաստատում են իրենց հետևողական և միասնական դիրքորոշումը՝ հօգուտ հակամարտության էության բոլոր մնացած հիմնական հարցերի վերաբերյալ բանակցային, համընդգրկուն և կայուն կարգավորման՝ հիմնական սկզբունքների ու տարրերի համաձայն, որոնք լավ հայտնի են ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին»: Այս հայտարարությունը արձանագրում է, որ համանախագահող երկրները շարունակում են պնդել իրենց դիրքորոշումը կարգավորման գործընթացը պատերազմի պատճառով ընդհատված կետից՝ երեք հիմնարար սկզբունքների և վեց տարրերի հիման վրա (սկզբունքներից մեկը ինքնորոշման իրավունքն է, իսկ տարրերից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը հանրաքվեի միջոցով, որի ցանկացած արդյունք բոլորը պետք է հարգեն) շարունակելու վերաբերյալ: Այդ մոտեցումը դեկտեմբերի 14-ի հայտարարությամբ հաստատեցին նաև համանախագահները. «Հղում անելով դեկտեմբերի 3-ին Տիրանայում կայացած Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների ԵԱՀԿ նախարարական հայտարարությանը՝ համանախագահները կրկին հայտարարում են իրենց միասնական դիրքորոշման մասին՝ հանուն բոլոր մնացած էական հարցերի համապարփակ և կայուն կարգավորման»:

Ինչ վերաբերում է վեց տարրերից մյուս հինգին, ապա դրանցից երկուսը կարիք ունեն խմբագրման՝ 2020թ. պատերազմի արդյունքների հիման վրա: Մասնավորապես, հարկ է խմբագրել Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներին վերաբերող տարրը, քանի որ պատերազմից հետո Ադրբեջանի նախկին շրջանների բոլոր տարածքներն արդեն Ադրբեջանի վերահսկողության ներքո են: Ավելին, Ադրբեջանի վերահսկողության տակ են հայտնվել Լեռնային Ղարաբաղի Հադրութի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Շուշիի շրջանների տարածքներ, Շուշի և Հադրութ քաղաքները: Հետևաբար, ըստ հիմնարար սկզբունքների, այդ տարածքները Ադրբեջանը պետք է վերադարձնի Արցախին: Վերանայման ենթակա է նաև խաղաղապահներին վերաբերող տարրը, քանի որ նրանք արդեն տեղակայված են բաժանարար գծի ամբողջ երկայնքով: Փաստորեն, կարգավորման այն սխեման, որն առաջարկում էին համանախագահները, պատերազմից հետո որոշ կետերով իրագործված է և Լեռնային Ղարաբաղին վերոհիշյալ տարածքների վերադարձից հետո պետք է անցնել երկրորդ փուլի իրագործմանը, որի առանցքային խնդիրը Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումն է: Քանի որ Ռուսաստանի արտգործնախարար

Ս. Լավրովը, ինչպես նաև ռուս համանախագահ Ի. Պոպովը ևս ստորագրել են հայտարարությունները, կարելի է վստահաբար պնդել, որ կարգավորման այդ ընթացքը լիովին բխում է նաև Մոսկվայի շահերից: Սակայն ակնհայտ է, որ այն կարող է իրականացվել, եթե Ֆրանսիան և Միացյալ Նահանգները ներկայացնող համանախագահները պահպանեն իրենց անսասան դիրքորոշումը կարգավիճակի որոշման վերաբերյալ, որպեսզի Մոսկվան դիմակայի Անկարայի ու Բաքվի ճնշումներին: Թեև ակնհայտ է, որ Ռուսաստանն այդ ճանապարհի սկզբնական մասը կանցնի մեծ զգուշությամբ՝ իր դիրքերը չկորցնելու ակնկալիքով, սակայն հատկանշական է, որ վերջերս ադրբեջանական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում Ռուսաստանի փոխարտգործնախարար Ա. Ռուդենկոն արձանագրել է՝ ԵԱՀԿ ՄԽ ձևաչափը պետք է հետագայում ևս առաջատար դեր խաղա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Ֆրանսիան միշտ ընդգծել են, որ Լեռնային Ղարաբաղի հարցում միշտ ունեցել են միասնական դիրքորոշում՝ մի կողմ թողնելով այլ հարցերում տարաձայնությունները:

Հանուն Լեռնային Ղարաբաղում ցեղասպանության կանխարգելման՝ արժե այս փուլում ևս հաստատել, որ երբ օրակարգում մարդկության դեմ կատարվող հանցագործությունների հարցն է, ազդեցիկ պետությունները կարող են վեր կանգնել կարևոր, բայց ժամանակավոր անգամ աշխարհաքաղաքական շահերից: Իհարկե, գործի կդրվեն շանտաժի ու գայթակղության տարբեր մեխանիզմներ: Եվրամիությանը կարող են փորձել գայթակղել կեղծ գաղափարով, որ իբր «Նախիջևանի միջանցքը» Եվրոպայի համար «Հարավային գազային միջանցքով» ճանապարհ կբացի դեպի Կասպյան ավազանի գազային անսահմանափակ պաշարներ (նույնքան կեղծ գաղափար, որքան տարիներ շարունակ զգալի ֆինանսական միջոցներ կլանած «Նաբուկկո» գազատարի 60 մլրդ խմ-ի հեռանկարները): Միացյալ Նահանգներին կսպառնան «Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի ռազմավարական կապերի ընդմիշտ կորստով», Թուրքիայից ամերիկյան ռազմակայանների դուրսբերման պահանջով և ՆԱՏՕ-ն լքելու հեռանկարով: Ռուսաստանին կգայթակղեն ռազմական տեխնիկայի մեծածավալ գնումներով և ԵԱՏՄ-ին Ադրբեջանի միանալու հեռանկարով (ինչպես դարասկզբին Թուրքիան էր ռուս բոլշևիկներին խոստանում դառնալ կոմունիզմի դրոշակակիրը Արևելքում):

Ոմանք համարում են, որ Ջ. Բայդենի ուղերձում Հայոց ցեղասպանության ուղիղ հիշատակումը պատժիչ քայլ էր Թուրքիայի նկատմամբ, որը վերջին տարիներին շրջվել է դեպի Ռուսաստանը և մի շարք քայլեր արել, որոնք հարիր չեն ՆԱՏՕ-ի անդամ և Միացյալ Նահանգների հետ սերտ գործընկերություն ունեցած

պետությանը: Անկարան վերջին տարիներին ոչ միայն Մոսկվայի հետ կառուցում է Թուրքիայում առաջին՝ «Ակկոյու» ատոմակայանը, արդեն գործարկել է Ռուսաստանի համար բացառիկ նշանակություն ունեցող «Թուրքական հոսք» գազատարը, որը կառուցվեց ի հեճուկս Միացյալ Նահանգների բազմաթիվ կանխարգելիչ զգուշացումների և նախատեսված է դեպի Եվրոպա ռուսական գազի մեծածավալ պաշարների տեղափոխման համար, այլև գնեց ռուսական Ս-400 հակահրթիռային համակարգ՝ չնայած ամերիկյան մի շարք սպառնալիքների ու պատժամիջոցների: Պատկերն ամբողջացնում են Անկարայի ինքնուրույն քաղաքականության դրսևորումները ակտիվ հակամարտությունների գոտիներում՝ Լիբիա, Սիրիա, Լեռնային Ղարաբաղ:

Այդուհանդերձ, չարժե հավատալ, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամ երեք պետություններ՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու Ֆրանսիան, 21-րդ դարում կարող են ոտնահարել իրենց պարտավորություններն ու ցեղասպանության կանխարգելումը ստորադասել թվացյալ շահերին: Աշխարհաքաղաքական խելակորույս մրցակցության արդյունքում աշխարհն օր օրի ավելի է կորցնում սկզբունքների ու արժեքների կանխարգելիչ հնարավորությունները և հայտնվել է գլոբալ աղետների դարաշրջանի շեմին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*